

պես այդպիսիք ծառայում են հարավային ու հյուսիսային եկեղեցիների համապատասխան պատերը: Սակայն, եթե հյուսիսային եկեղեցին գավթի հետ ունի կառուցվածքային միաձուլություն, ինչպես ներսի, այնպես էլ արտաքին որմնաշարի ձևերում, ապա հարավային եկեղեցին կառուցվածքային կարող շեշտվածորեն մեկուսացված է: Ուշագրավ է նաև հարավային եկեղեցու մուտքը, որ քաղցած է գավթի մեջ: Այս մուտքը ևս քարի գույնով մերձենում է գավթի հետ և ձևավորմամբ ևս նման է գավթի կենտրոնական մուտքին: Հարավային եկեղեցու մուտքը միաժամանակ խստորեն տարբերվում է հյուսիսային եկեղեցու մուտքից: Հարավային եկեղեցու մուտքի ձևավորման պատճառն անկասկած 1206 թ. արձանագրությունը փորագրելու նպատակն է եղել, իսկ արձանագրությունը փորագրելու տեղի նախապատվությունը, հավանաբար, բխել է եկեղեցու հենց առավել հնությունից և ըստ այդմ էլ՝ ավանդապաշտական ըմբռնումներից: Եթե ենթադրենք, որ 1206 թ. գրված Սամուելի շինարարական արձանագրությունը, փորագրվելով հարավային եկեղեցու պատին, ավանդում է լոկ այդ եկեղեցու կառուցման մասին, ապա գավթի կարող էր կառուցվել միայն դրանից հետո,

որովհետև ավելի վաղ լինելու դեպքում նա հարավային պատ չէր ունենա:

Այսպիսով, գավթի և հյուսիսային եկեղեցու միենույն ժամանակ և հարավային եկեղեցու՝ ավելի վաղ կառուցված լինելը դառնում է անփիճելի: Հարավային եկեղեցու և գավթի մուտքերի համանման ձևավորման տարրերից դատելով դրանք կառուցվել են միաժամանակ և այդ ժամանակը, արձանագրության համաձայն, 1206 թ. է: Վերջապես ամենակարևորը, եթե հարավային եկեղեցին (բացառությամբ այդ մուտքի) կառուցվել է գավթից ու հյուսիսային եկեղեցուց ավելի վաղ, ապա այն գոյություն է ունեցել մինչև 1206 թ.: Ահա հենց այստեղ էլ իր հավաստիությունն է ստանում Գրիգորի արձանագրության 941 կամ 950 թ., որից իմանում ենք հարավային եկեղեցու կառուցման ժամանակը և այն, որ սա Հոռոմայր վանքի երկու խմբերի մեջ առավել հնագույնն է: 1206 թ. համալիրը նախագծելով կառուցող նարտարապետը որպես ելակետ է ընդունել X դարի եկեղեցու համաշափությունները և ստեղծել ամբողջական համակառույց:

Պատմ. գիտ. քննվածու
Ա. Ա. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ XII—XIV ԳԱՐԵՐԻ ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԱՆՀԱՅՏ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Հայ մատենագրության մեջ կան հուշարձաններ, որոնք իրավամբ ձանաչում ու հեղինակություն են բերել հայ միջնադարյան բժշկագիտությանը: Բժշկապետներ Հերացու, Գրիգորիսի, Ամիրղոզվաթի, Ասար և Բունիաթ Սեբաստացիների գործերը, առավել կամ պակաս շափով, արդեն ուսումնասիրված և գիտական շրջանառության մեջ են դրված: Սակայն երբ խոսք է գնում ընդհանրապես միջնադարյան հայ բժշկագիտության ամբողջական գնահատման մասին, հարկ է ի նկատի ունենալ նաև ավելի վաղ ժամանակաշրջանում ստեղծագործած հայ բժիշկների աշխատությունները, որոնք մեզ չեն հասել, բայց այդ բժիշկների մասին որոշ տեղեկություններ կամ նրանց գործերից առանձին պատահիկներ բարեբախտաբար պահպանվել են հետագա դարերի բժշկարաններում¹:

X դարում Հայաստանում բժշկագիտության զարգացման մասին է վկայում Գագիկ-Հեթումյան բժշկարանը: Դա մեզ հայտնի ամենահին հայերեն (թեկուզ թարգմանական) բժշկարանն է, որի ստեղծման ժամանակաշրջանը X դարն ընդունելուն հիմք է տալիս հենց բժշկարանի վերնագիրը. «Բժշկարան զոր փոխած է ի տաճիկ լեզուէ (արաբերենից—Դ. Կ.) ի հայս ի ժամանակս յաղթող թագաւորին Հայոց Գագկայ»²:

Մինչև XII դարը հայերեն բժշկարան գրվելու և հայ բժշկի անվան մասին վկայություն կա նաև Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» առաջաբանում: Նշելով, որ իրենից առաջ եղած գործերը հիմնականում վերաբերել են

¹ Տե՛ս Ս. Գանեսյան, *История медицины в Армении*, ч. I, Ереван, 1946, էջ 43--75: Ղ. Հոփնանյան, *Հետադաստիներ նախնեաց ոսմկորէնի վրայ*, մասն Ա, Վիեննա, 1897, էջ 43--44: Տե՛ս նաև Գ. Զարրհատ

նալյան, *Պատմություն հայերեն դպրութանց*, մասն Ա, Վենետիկ, 1865, էջ 428:

² Տե՛ս Ղ. Հոփնանյան, նշվ. աշխ., էջ 129--140: նաև՝ Ս. Գանեսյան, *История медицины в Армении*, ч. II, Ереван, 1946, էջ 46--47:

գործնական բժշկություն³, Հերացին նույն աշխատության մեջ հիշատակում է «Սահակ՝ հայկազն բժշկի» մասին⁴:

XII—XIV դդ. ապրած և ստեղծագործած բժիշկների մասին վկայություն կա Ամիրդովլաթ Ամասիացու ղեզաբառարանի նախաբանում. «Ասէ իմաստուն Սողոմոնն, թէ գիտութիւն լոյս է, եւ անգիտութիւնն խաւար, եւ ով որ դուսումն ունի՝ զլոյսն ունի, եւ այս բժշկութեան արհեստս ի գիտնականութենէն եւ յուսմանէն մաս մըն է... Եւ ի յայս բանիցս առին առաջին բժշկապետքն մեր՝ Մեծն Մխիթար բժիշկն, եւ Ահարոն բժիշկն, եւ որդի նորա Ստեփանոս բժիշկն, եւ տոհմն նոցա՝ Ճոշիին բժիշկն, եւ Սարգիս բժիշկն, եւ Յակոբ բժիշկն, եւ Գեղին բժիշկն, եւ Սիմաւոն բժիշկն, եւ Վահրամ բժիշկն, որ շատ գրեանք շինեք էին վասն դեղերուն զաւրուքեանն եւ ազուրքեանն»⁵:

Ամիրդովլաթի կողմից թվարկված բժիշկների գործերից դժբախտաբար միայն Հերացի բժշկապետի «Ջերմանց մխիթարութիւնն» է, որ ամբողջությամբ հասել է մեզ: Հերացու այլ աշխատությունների հավանական գոյության մասին խոսել են հայ միջնադարյան պատմության ուսումնասիրողները (Ղ. Հովնանյան, Ղ. Ալիշան, Վ. Թորգոմյան, Լ. Հովհաննիսյան), որոնք այն կարծիքն են հայտնել, թե Հերացին է հեղինակը նաև ընդհանուր ախտաբանության հարցերին նվիրված մի այլ բժշկագիտական գործի⁶: Բարեբախտաբար Հերացու գրչին պատկանող մյուս գործերից առանձին հատվածներ են պահպանվել հետագա դարերի բժշկարաններում: Այս առումով առանձնակի արժեք ունի XVII դարի հեղինակ Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» երկը, որտեղ հանդիպում ենք Հերացու կորած աշխատությունից՝ վերին շնչական ուղիների ախտահարմանը և աճուկափոշտային ճողվածքների

ախտածագման ու բուժման հարցերին վերաբերող առանձին մասերի⁷:

Բացի այդ, Ասար Սեբաստացին աչքի կազմության վերաբերյալ Հերացու գրչին պատկանող մի մեծ հատված ավելացրել է XII դարի բժիշկ Աբուսայիդի «Մարդակազմության» իր կողմից խմբագրված օրինակին⁸: Մխիթար Հերացին անդրադարձել է ոչ միայն աչքի կազմախոսությանը, այլև տեսողական օրգանի ամենատարբեր ախտահարումների և դրանց բուժման հարցերին: Այսպես, Մաշտոցի անվան Մատենադարանի № 8873 անհեղինակ ձեռագիր-բժշկարանի 463-ից 494 էջերը զբաղեցված են աչքի դանազան հիվանդությունների և դրանց բուժման բազմաթիվ ղեզամիջոցների նկարագրություններով: Եվ հենց այստեղ էլ առկա է մի մեծ պատահիկ, որը ամենայն հավանականությամբ ձեռագիրը կազմող բժիշկը (կամ բնօրինակող գրիչը) վերցրել է Մխիթարի՝ մեզ չհասած անհայտ աշխատությունից: Այդ մասին է խոսում հետևյալ վկայությունը. «Վասն ամենայն ցեղ աչաց ցաւութեան ի բանից Մխիթարայ: ...Այլ կամ եղև ինձ Մխիթարայ գրել ի յայլ գրոց՝ վասն աչիչ դեղի, զի աչքն մեծ զաւղված և պարկեշտ գործարան և կարիք է: Ի շատ դեղերայք և ի շատ ըստածումն և յիշեմ զգեղերանքն, զոր ունի ակրաբաղինն ի ԺԴ դուռն օգնութեամբն Աստուծոյ, զոր դեղորով դնեն ի յաչքն...»⁹: Այնուհետև բերվում են Մխիթարի առաջարկած ղեղատոմսերը. «Այլ դեղ, որ կոչի տրամադիկոն», մեկ այլ դեղ «որ կոչի փոքր դրամադիկոն», «Այլ դեղ աչաց, որ կոչին բասիլիկոն, որ օգտէ աչաց, որ բորի կամ վատ տեսի», «Այլ դեղ, որ կոչի զաֆրանի՝ օգտէ աչաց, որ վատայտեսի և այն, որ աչքն բորի և այն, որ աչքն

7 Այս հարցին մենք անդրադարձել ենք «Նոր պատահիկ Մխիթար Հերացու անհայտ աշխատությունից» հոդվածում, «էքսպերիմենտալ և կլինիկական հանդես», 1976, № 6, էջ 106—107:

8 Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., մասն Բ, էջ 502—504; Л. Оганесян, նշվ. աշխ., II, էջ 61; Б. Н. Мелик-Мусян, Глаз и зрительный нерв по манускриптам врачей армян XII—XV вв., «Մատենադարանի գիտական նյութերի ժողովածու», № 2, Երևան, 1950, էջ 29—36; Աբուսայիդ, Յազգս կազմութեան մարդոյն, աշխատասիրությամբ Ս. Վարդանյանի, Երևան, 1974, էջ 17—24:

9 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 8873, էջ 467ր:

3 «Մխիթարայ բժշկապետի Հերացոյ Ջերմանց մխիթարութիւնն», Վենետիկ, 1832, էջ 3:

4 Գ. Ջարրհանալյան, Պատմություն հայ դպրության, Վենետիկ, 1932, էջ 676:

5 Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 2:

6 Ղ. Հովնանյան, նշվ. աշխ., էջ 87—91:

7 Ղ. Ալիշան, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 260, 261: Վ. Թորգոմյան, Հայ բժշկական ձեռագիրք Ս. Ղազարու վանքին, «Բազմավեպ», 1923, էջ 42—43:

8 Л. Оганесян, նշվ. աշխ., II, էջ 83—84:

ի ներքս զէտ խաշած լինի: Առ զաֆրան (Crocus) Բ դրամ, դարապղպեղ (Piper) Ա դրամ, սպիտակ սղպեղ (Piper album) դանկ ու կէս, անուշատր (Ammoniac) կէս դրամ, գիտոր (Galla) Գ դրամ, սնֆուլ (Nardus) Բ դրամ, քաֆր (Camphora) կէս դանկ աղա և մաղէ և դեղզրով ի բանն տուր»: Այս հատվածի վերջում գրված է. «Այլ դեղ աշաց, որ օգտէ այդ ցաւերաց, որ գրեցաք և զինքն այլ բժշկարանէ թարգմանեցի՝ զի ակրաբադին շունէր»¹⁰:

Պետք է կարծել, որ խոսքը Հերացու կողմից գրված (գուցե նաև թարգմանված) «Ախրաբադինի» մասին է¹¹: Թերևս նա ձեռքի տակ ունեցել է մի «Ախրաբադին», որտեղ շեն եղել վերը նշված դեղատոմսերը, և այդ բացը նա լրացրել է իրեն հայտնի դեղատոմսերով:

Մատենադարանի № 7251 ձեռագիր-բժշկարանի մի այլ պատահիկ նվիրված է ճիճվային հիվանդության բուժմանը. «Գրեմք զասացեալն Մխիթար բժշկապետին վասն բանիս: Այլ դեղ ճիճոյ: Այլ դեղ տափակ ճիճոյ» և այլն: Դեղերն ունեցել են արտահայտված որդամուղ ազդեցություն և լայն կիրառում են գտել պրակտիկ բժշկության մեջ¹²:

Հերացու հեղինակությանն առնչվող բավական հետաքրքիր մի փաստ է: Խոսքը վերաբերում է Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 624 թվահամարը կրող ծավալուն ձեռագիր-բժշկարանին, որի երկրորդ մասում, ի թիվս տարբեր բժշկարաններից հավաքված բազմաթիվ դեղատոմսերի, առկա է Հերացու հեղինակությամբ մի պատահիկ, ուր նա անդրադարձել է միզային օրգանների տարբեր ախտաճարձմաններին և դրանց բուժմանը. «Ի բանիցն Մխիթարա(յ): Կան եւ այլ ցաւեր երիկամացն, որ չէ յիշած ի գիրքս. բայց ես Մխիթարս յիշեմ զցաւերն եւ զպատճառն օգնութեամբն Աստուծոյ: Եւ յառաջ զքարն յիշեմ եւ ասեմ, թէ որպես ընծայի քարն յերիկամունքն...»¹³, որից հետո շարունակվում է այսպես. «Ի բանիցն Մխիթարայ: Այլ ես Մխիթարս, սակաւ մի, թէ քանի պատճառն գողար-

գելն է»¹⁴: Ձեռքի տակ շունենալով վերոհիշյալ բժշկարանը, դժվար է ավելի հանգամանակից խոսել այդ պատահիկի մասին:

Այս բոլոր հատակոտորները վերաբերում են ներքին ախտաբանության հարցերին. գուցե դրանք վերցված են Հերացու՝ ներքին ախտաբանությանը նվիրված մի աշխատությունից, որն իր ամբողջությամբ կամ չի հասել մեզ, կամ էլ պահպանվել է որևէ բժշկարանի մեջ առանց հեղինակի անվան հիշատակության¹⁵:

XII—XIV դդ. ստեղծագործած հայ բժիշկների մեջ առանձնանում է Ահարոն բժշկի տոհմը, որի մասին, ինչպես նշեցինք, հիշատակված է Ամիրզովյաթի «Անգիտաց անպէտի» առաջաբանում: Այդ բեղմնավոր տոհմի անդամներից (ի դեմս Ահարոնի, նրա որդիներ Ստեփանոսի ու Ճոշիինի, Սարգիս, Հակոբ, Գեղին, Սիմավոն, Վահրամ բժիշկների) դժբախտաբար միայն Ստեփանոս բժշկի և նրա «Ծաղիկ» կոչվող ստվարածավալ բժշկարանի մասին ունենք որոշ տեղեկություններ:

Կարապետ Գաբրիկյանը XX դարի սկզբներին երկար տարիներ զբաղվել է Սեբաստիայում և նրա շրջակա գավառներում գտնվող հայերեն բժշկարանների հայտնաբերման և նկարագրման գործով: Նրա ձեռքի տակ եղել է Ստեփանոսի «Ծաղիկ» կոչվող մի բժշկարան, որը և նկարագրել է իր կողմից հրատարակած «Ցուցակագրություն իմ սեփական բժշկարաններու և այլ ձեռագրաց» հոդվածում¹⁶:

14 Նույն տեղում, ձեռ. № 624, էջ 230ա:

15 Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 1281 հնագույն հայերեն ձեռագիր-բժշկարանի (ընդօրինակված 1294 թ.) 3-րդ մասը իրենից ներկայացնում է անհայտ հեղինակի՝ ընդհանուր ախտաբանությանը նվիրված բավական ընդարձակ մի գործ (էջ 230—395): Վ. Թորգոմյանը, ծանոթանալով 91 գլուխներից բաղկացած այդ բժշկարանին և այն համեմատելով Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարության» հետ, եկել է այն կարծիքին, որ բժշկագիտական մեծ արժեք ունեցող այդ գործը պատկանում է Հերացու գրչին (Վ. Թորգոմյան, Հայ բժշկական ձեռագիրը Ս. Ղազարու վանքին, «Բազմավեպ», 1923, էջ 40): Չի բացառվում, որ վերոհիշյալ գործը Մխիթար Հերացու ընդհանուր ախտաբանությանը նվիրված այն աշխատանքն է, որի մասին մի քանի անգամ հիշատակում է Հերացին և որից մեջբերումներ են անում հետագա դարերի հայ բժիշկները:

16 «Միոն», փետրվար 1953: Տե՛ս նաև Կ. Գաբրիկյան, Հայ բուսաշխարհ, Երուսաղեմ, 1968, էջ ԻԳ—ԻԵ:

10 Նույն տեղում, էջ 469բ:
 11 Հերացու կողմից դեղաբառարան՝ «Ախրաբադին» գրված լինելու փաստի մասին վկայություն կա հենց Հերացու կողմից, «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ (Մխիթար Հերացի, էջ 84):
 12 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7251, էջ 215ա-բ:
 13 Հ. Ոսկյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Վիեննա, Վիեննա, 1963, էջ 105, ձեռ. № 624, թ. 226:

Ցավոք, այդ բժշկարանը կորել է և այսօր դրա մասին տեղեկություններ ենք քաղում միայն վերոհիշյալ նկարագրությունից: Նկատի ունենալով այդ բժշկարանը, Վ. Թորգոմյանը գրում է. «Մխիթար Հերացիի և Ամիրզոլաթի շարքին Ստեփանոս բժիշկ իր թողած սույն երկով հայ բժշկության պատմության մեջ կարևոր տեղ մը կրճեն: Ամիրզոլաթի պես ինքն ալ շատ երկրներ էր շրջած, տարբեր ազգերու բժշկության եղանակները ուսումնասիրած, բազմաթիվ բժշկարաններ պրպտած, քննած անոնցմե ընտրանքը կազմած է իր «Ծաղիկ», որուն կպած է իր բազմամյա փորձառությանց ու հմտությանց արդյունքը ու իր հորմէն ուսածներով ու անոր գրավոր գործերովը ճոխացուցած»¹⁷:

Բժշկարանը, ըստ Կ. Գաբրիկյանի նկարագրության, բավական սովորածավալ (ավելի քան 900 էջ) մի ստեղծագործություն է, որտեղ հեղինակն անդրադառնում է ժամանակի բժշկությանը հայտնի համարյա բոլոր հիվանդությունների ախտաբանությանն ու թերապիային:

Ստեփանոս բժիշկն իր գործը գրել է կիլիկյան հայերի խոսակցական լեզվով¹⁸. «...Եւ ես մեղուցեալ Ստեփանոս քաղում աշխատանօք ընտրեցի սակաւ և ըղորդեցի կիլիկեցոց բառին վրայ եւ ի յԱրևելից բառին վրայ եւ արարի զսա միջնավար»: Բժշկարանը շարադրելով ոչ թե գրաբար, այլ ժողովրդական խոսակցական լեզվով, Ստեփանոսը փաստորեն շարունակում է բժշկարանները «ռամկորեն» շարադրելու, դրանք ժողովրդին հասկանալի դարձնելու՝ Հերացու ավանդները:

«Ծաղիկ» երկի հեղինակի մասին հետաքրքիր տեղեկություն է պարունակում Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 624 թվահամարի տակ գտնվող հայերեն բժշկարանը, ուր Ստեփանոսի անունով մի ղեղատոմսի մեջ հիշատակություն կա, որ նա ապրել է Կիպրոս կղզում, Տարսոնում և շատ ուրիշ քաղաքներում՝ ամենուրեք օգտագործելով իր բժշկական արվեստն ու փորձը. «Այլ ղեղ Ստեփանոսի նուաստի ղուգած, որ արարի ի վերայ այս ցաւուս եւ օգտեաց բազմաց Աստուծով: Ի կիպրոս կղզուչն եւ ի Տարսոն եւ այլ բազում քաղաքս...»¹⁹:

Հայտնի է «Ծաղիկի» ստեղծման ստույգ թվականը. «...Եւ ես Ստեփանոս մեղուցեալ ծառայ Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ

և իմ հարազատ եղբայրն Ճօշին բժիշկն գրեցաք զինքս ի թվին Հայոց ՈԶԱ (1232) ի յօգտութիւն շատ բժշկաց և յառողջութիւն քաղում հիւանդաց...»: Այդ գործի հիշատակարանում Ստեփանոսը, ի թիվս այլ աղբյուրների (Հիպոկրատ, Գալեն, արաբ բժիշկներ՝ Ռազես, Ապլիարիբ, Իբն Սինա), մասնավորապես առանձնացնում է Մխիթար Հերացուն, որից օգտվել է նա և որին (ըստ հիշատակարանի վկայության) աշակերտել է ինքը:

Ստեփանոսի բժշկարանի մեծ արժեքի մասին է վկայում հետագա դարերի հայերեն նույնատիպ գործերում, մասնավորապես Ասար Սեբաստացու կողմից նրա օգտագործվելու հանգամանքը: Ի դեպ, այն փաստը, որ «Ծաղիկ» բժշկարանը հայտնաբերվել է Սեբաստիայում, առիթ է տալիս կարծելու, որ այն եղել է Ասար Սեբաստացու ձեռքի տակ:

Ստեփանոս բժիշկը առանձնապես նշում է իր յոր՝ «Ահարոն բժշկապետ Եթեսացոյ» մասին, որից նա սովորել է բժշկական արվեստը և որի բազմաթիվ ղեղամիջոցները մեջբերել է իր բժշկարանում: Հիմք ընդունելով հենց իր՝ Ստեփանոսի վկայակոչումը, «Ծաղիկ» բժշկարանում տեղ գտած մի շարք ղեղամիջոցներ իրավամբ վերագրվում են բժշկապետ Ահարոնին, որը անպայման եղել է փորձ ու վաստակ ունեցող բժիշկ (հիշենք Ամիրզոլաթի վկայությունն այդ մասին): Ահարոնի ղեղատոմսերից մի քանիսը «Ծաղիկից» քաղել և մուծել է իր «Գիրք բժշկական արհեստի» աշխատության մեջ Ասար Սեբաստացին²⁰:

Ահարոնի հեղինակությամբ Ասարի բժշկարանում բերված հատվածներից առաջինը վերաբերում է աճուկափոշտային ճողվածքների թերապիային. «Վասն փոշտանկի, որ է ձուանկն: Եւ գրէ Ըստեփանոս բժիշկն, թէ իմ հայրն Ահարոն բժիշկն ռառոյց զայս ինձ, որ այլ զօրաւոր է, քան զառաջինդ»²¹: Այս ղեղատոմսը խորհուրդ է տրվում հատկապես մեծահասակներին: Դա արդյունավետ բուժամիջոց է և թերևս ամենաօգտագործելին՝ աճուկափոշտային նոր առաջացած ճողվածքների ժամանակ. «Եւ թէ մեծ մարդոյ, որ նոր յիմացվի և անես զայս նոյն կերպիւ յաջողի օգնութեամբն Աստուծոյ»: Հեղինակը խորհուրդ է տալիս ճողվածքի տեղում ղնել հատուկ կապ, որը որովայնին ամրացվում է տարբեր ղեղամիջոցների խառնուրդից ստացված սոսնձի մի-

17 Տե՛ս նույն տեղում:

18 Տե՛ս Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց, աշխ. Ա. Կժոյանի, Երևան, 1962, էջ 26:

19 Հ. Ոսկյան, նշվ. աշխ., էջ 105:

20 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 413, էջ 167ր:

21 Նույն տեղում, էջ 163բ, ձեռ. № 7749, էջ 55բ—56ա:

ոտցով: Դեղատոմսի կազմության մեջ մտնող քաղաղորիչ մասերը հիմնականում ունեն կոլոիդալ, կաշուն հատկություն:

Բավական հետաքրքրություն է ներկայացնում Ահարոնի հեղինակությամբ Ասարի բժշկարանում հանդիպող, շատ բարդ կազմություն ունեցող մեկ այլ դեղատոմս, որն առաջարկվում է վաղեմություն ունեցող խոցերի՝ երկար տարիներ ոչ մի դեղորայքային բուժման չենթարկված վերքերի բուժման համար. «նշանք տէկպարտիկին, որ օգտ է նաստրին եթէ ժ տարու լինի, որ ևստէ զփտած միսն և սրբէ և շատ օգտութիւն անէ ի հին խոցերն Աստուծով...»²², Դեղատոմսի հիմնական բաղադրիչ մասը «դեղին և կարմիր գառիկն» է: Խոսքը Arsenicum-ի մասին է, որը բնության մեջ հանդիպում է հիմնականում արծաթի, կորալտի և սնդիկի հետ խառնված: Որպես խիստ ազդու բուժամիջոց այն դեռ շատ նույց օգտագործվել է մաշկային մի շարք խրոնիկական հիվանդությունների բուժման համար: Դեղամիջոցը կազմված է այդ ու մի շարք այլ նյութերի խառնուրդից, որոնք որոշակի ջերմության պայմաններում և հատուկ կավե ամաններում ենթարկվում են երկարատև մշակման և հետո միայն օգտագործվում բուժման նպատակով²³:

Դեղապատրաստման պրոցեսը հանդամանորեն նկարագրելուց հետո Ստեփանոսը նշում է. «Ահա դեղ, որ փակած է և չէ գրած ի բժշկարանին, բայց գիտուն մարդիքն իրերաց ուսցնեն և մեր հայրն Ահարոն բժիշկն մեզ էր ուսուցել և ես Ստեփանոս... և իմ հարազատ եղբայրն Ճօշին բժիշկն գրեցաք զինքս ...և որք օգտիք ի սմանէ և ուսանիք զանյայտ դեղս՝ մեզ և մեր ծնողաց մեզաց թողութիւն խնդրեցէք Աստուծով»²⁴:

Ահարոն բժշկի անվամբ դեղատոմսի ենք հանդիպում նաև XVII դարի մեկ այլ բժշկարանում, ուր թեև նշված չէ աղբյուրը, սակայն ամենայն հավանականությամբ դարձյալ վերցված է նույն «Մաղիկից»: Դեղամիջոցը առաջարկվում է յսողական օրգանի ախտահարման ժամանակ: «Ելի է այս: Ահարոն ասաց, թէ զսխտորի ջուրն և զօշխարի լեղին եռացոյ և ականջն կաթնցոյ զխլութիւն տանի և զգլխացաւն»²⁵:

Ասարի բժշկարանում հանդիպում ենք մի շարք այլ դեղատոմսերի, որոնք նույնպես,

պետք է կարծել, վերցված են Ստեփանոսի վերոհիշյալ գրքից: «Հապ լուծման և շատ օգտութիւն անէ զոր ես փորձեցի Ստեփանոս», «Այլ նշանք լուծման դեղի, զոր ես փորձեցի Ստեփանոս», «օգտեց ամեն բազում ջերմնոտառ»²⁶ և «Այլ նշանք բուսանդ շինելոյ»²⁷, Առանձնակի ուշադրության է արժանի 3-րդ պատառիկը, ուր Ստեփանոսը շարադրում է դեղամիջոցի պատրաստման եղանակը և տեղեկություններ է տալիս իր մասին. «Եւ աղաչեմ զգիտնականքնդ շմեղադրել ինձ մեղուցեալ ծառայի Աստուծոյ Ստեփանոսի վերջնու նվաստ իրիցու հմուտ բժշկական արհեստի, որդի Ահարոն բժշկապետի Ուրհացոյ, թողցէ տէր զյանցանս իւր»²⁸:

Ստեփանոսի անունով դեղատոմսի ենք հանդիպում նաև Մատենադարանի անհեղինակ մի այլ հայերեն բժշկարանում. «Ես Ստեփանոս այս դեղս արի, օգտեց Աստուծով...»²⁹:

Ստեփանոսն իր «Մաղիկ» բժշկարանում Ահարոնի և Ճոշինի կողքին հիշատակում է նաև Միքայել բժշկի անունը. «Եւ իմ ծնողացն Ահարոն բժշկին և Մլհամի, եւ հարազատ եղբոր իմոյ Ճօսլի բժշկին և յառաջ փոխեցելուն առ Քրիստոս Միքայէլի բժշկին...»³⁰, Միքայել բժշկի անունով որևէ դեղատոմս մեզ հայտնի չէ, գուցե թե դրանք եղել են Ստեփանոսի բժշկարանում:

Ահարոնի տոհմի մյուս ներկայացուցիչների՝ Ճոշին, Սարգիս, Հակոբ, Դեղին, Սիմավոն (Սիմեոն), Վահրամ բժիշկների մասին շատ ավելի քիչ տեղեկություններ են մեզ հասել: Կան միայն առանձին փոքրիկ հիշատակումներ, մասնավորապես Ամիրդովյաթ Ամասիացու «Ախրարագինում»-ում:

Ստեփանոսի բժշկարանի հիշատակարանը տեղեկություն է պարունակում վերը թվարկված բժիշկներից Սիմեոնի մասին. «Եւ ապայ ես Ստեփանոս մեղուցեալ ծառայս Աստուծոյ և նուաստ քահանայ, որդի Ահարոնի բժշկապետին Եթեսացոյ, որ թարգմանի Ուռհայ, սակաւիկ մի զոր ես էի արարել եւ օգտել էր փորձիւ բազմաց, զոր իմ հօրէն էի ուսել, եւ ի Մխիթար եւ ի Սիմէօն բժիշկէն խօսք սակաւ եղի յայս դրունքս վասն օգտութեան մարդկան եւ որչափ կենդանի է ի վայելումն մարմ-

22 Նույն տեղում, ձեռ. № 413, էջ 166ա—165բ:

23 Նույն տեղում, էջ 167ա:

24 Նույն տեղում, էջ 167բ:

25 Նույն տեղում, ձեռ. № 7749, էջ 115բ:

26 Նույն տեղում, էջ 51ա-բ: Նաև՝ ձեռ. № 413, էջ 160ա:

27 Նույն տեղում, ձեռ. № 413, էջ 155բ:

28 Նույն տեղում, ձեռ. № 7749, էջ 51բ:

29 Նույն տեղում, ձեռ. № 7304, էջ 81բ:

30 Կ. Գ ա Ր ի կ յ ա ն, Հայ բուսաշխարհ, էջ 166:

նոյ...»³¹, Պետր է Լնթադրել, որ Սիմեոն բժիշկը եղել է Մխիթարի ժամանակակիցը, կամ ապրել է նրանից անմիջապես հետո (XII դ. վերջ—XIII դարի սկիզբ)։ Անպայման մեծ համարում ունեցած այդ բժշկի անունը հիշատակվում է Մատինադարանի հայերեն բժշկարաններից մեկում, որ ոսկրային զանազան հիվանդությունների բուժման համար առաջարկվող մի դեղատոմս կա նրա անունով. «Մաշում Սիմէօնի, որ օգտ է կուղութեան և ամէն ոսկրացաւութեան»³²։

Մինչև XV դարը ստեղծագործած հայ բժիշկների անհայտ աշխատություններից մնացած վերոհիշյալ պատահիկները ավելի են ամբողջացնում միջնադարյան հայ բժշկագիտության պատկերը, մեկ անգամ ևս լավաստելով, որ միջնադարում՝ առանձնապես X—XIV դդ. Հայաստանում բժշկագիտությունը վերելք է ապրել, ստեղծվել են նշանակալից աշխատություններ. որոնք ըստ ամենայնի նպաստել են հայ բժշկագիտական մտքի զարգացմանը։

Գ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՇԵԳԳԱԳՅԱՆ ԳՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Միջնադարյան հազվագյուտ գրամների թվին են պատկանում Շեղգաղյան ամիրաների գրամները։

Նյութերի բացակայության պատճառով մինչև վերջերս հնարավոր չէր խոսել Հայաստանում շեղգաղյան գրամների շրջանառության մասին։ Մակայն ներկայումս նոր գրամագիտական վկայությունները թույլ են տալիս նշելու, որ

ՍՍՀ տարածքի վրա արդեն ի հայտ են եկել Շեղգաղյան հարստության հետևյալ գրամները։

1. Գիրճեմ, թողարկված Շեղգաղյան ամիրա Յաղլ I իրն Մուհամմեդի (հիշրայի 375—422 թթ.—մ. թ. 985—1031 թթ.) և Աբրաայան խալիֆա ալ-Կադիր Բիլլահի (հիշրայի 381—422 թթ.—մ. թ. 991—1031 թթ.) անունների հիշատակությամբ։



XI դարում հայկական շուկաներում, մասնավորապես Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում, բացի բյուզանդական գրամներից, որոնք այնքան հաճախ են գտնվում, տարածված են եղել նաև շեղգաղյան գրամները։ Հայկական

2. Գիրճեմ, թողարկված Շեղգաղյան ամիրա Ալի իրն Մուսա Հաշկարի II-ի (հիշրայի 425—440 թթ.—մ. թ. 1034—1049 թթ.) և Աբրաայան խալիֆա ալ-Կաիմ Բիամր ալլահի (հիշրայի 422—467 թթ.—մ. թ. 1031—1075 թթ.) անունների հիշատակությամբ։

3. Գիրճեմ, թողարկված Շեղգաղյան ամիրա Աբու-լ-Ասվար Շավուր իրն Յաղլի (հիշրայի 441—459 թթ.—մ. թ. 1049—1087 թթ.) և Աբրաայան խալիֆա ալ-Կաիմ Բիամր ալլահի

31 ՏԷ՝ա Լույն տեղում։
32 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. N 7304, էջ 76ա։